ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013Թ. ԹԻՎ 33/6-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Արմեն Ֆերոյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում **(այսուհետ՝ Կարգ)** լրացում կատարելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան Պալատի անդամ հանդիսացող փաստաբաններ, որոնք մշտապես բնակվում են (հաշվառված են) Արցախի Հանրապետության տարածքում,

նկատի ունենալով այն, որ ներկայումս ընթացող պատերազմի կապակցությամբ Արցախի ողջ տարածքում անմիջականորեն ռազմական գործողություններ են իրականացվում,

հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող և Պալատի անդամ հանդիսացող փաստաբանների համար անդամավճարի արտոնություն սահմանելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ և 15-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ

21 հոկտեմբերի 2020թ.
թիվ 21/8-Լ

վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **14-րդ կետը լրացնել նոր՝ «գ» ենթակետով** հետևյալ բովանդակությամբ. ***«գ) ըստ Պալատում առկա փվյալների ռազմական դրության պայմաններում անմիջականորեն ռազմական գործողությունների իրականացման վայրում մշտապես բնակվող (հաշվառված) փաստաբաններին ամենամսյա անդամավճարից լրիվ մասով ազատում՝ Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով:»:***

2. Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվող և Պալատի անդամ հանդիսացող փաստաբաններին 1 (մեկ) տարի ժամկետով լրիվ մասով ազատել ամենամսյա անդամավճարից՝ սկսած 2020 թվականի սեպտեմբեր ամսից:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին սահմանված կարգով իրազեկել փաստաբաններին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 հոկտեմբերի 2020թ.
թիվ 21/8-Լ
ք. Երևան